ՅԱՒԵԼՈՒԱԾ Ե

(ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ԺԱ. ԱՄԱՑ)

1688· Վարդան արքեպիսկոպոսն ի հոս վիզիդատոր, յունվարի 10, կու պսակէ զԽաչգօն Թորոսենց Կամէնցացի։

1689· Վարդան արքեպիսկոպոսն՝ մարտի 18, կոնդակով կու ձգէ յերեց-փոխանութենէ զԲան Թուման Դասբրօվիչն, ու զՏէր Զախնօվիչն ի հոս վի-զարիուս կ՚անէ, anno 1694։

Տէր Խաչատուր Զօխնօվիչն օդրդիմադ կ՚անէ մեր Պարնէն, pro patentes, Գրագօվաքիչէն բրէզանդայ այս մեր եկեղեցուն, օգոստ. 26, և ինդի-դուցիայ կ՚առնու մեր Գ. Վարդան արքեպիսկոպոսէն, սեպտեմբ. 2։

Վարդան արքեպիսկոպոսն՝ հոկտեմ. 10, արար զգաւառական ժողով ի Լոմ, ու քաշվեցան յամէն քաղաքէ քահանայք. ուր Գեր. Նունցիուսն Գան-դէլմի բրէզիտէնս կ՚լայ։ Այս ժողովքին մէջ արարին, որ Պատարագատետր սրբագրվի ու տպվի ի Հռոմ, և Տօնացոյցն այլ, և ուրիշ բաներ. և այսպէս խրկեցին զասոնք ի Հռոմ. ու ինդրեցին զՍուրբ Ժողովն, որ զՏէր Աստուա-ծատուր եպիսկոպոսն ձէնէ ի Հռոմ, սրբագրէ զայս գրքերս, ու տպել տայ։

1690· Վարդան արքեպիսկոպոսն յայս տարի, նոյեմ. 10, զմեր Ադանիս-լաւօվու Կարիճվորաց Եղբայրութիւնն նոր յիրմէն տված կոնտակովն երկու-սումն կու հաստատէ. զորն որ վաղուց Նիկոլ Թորոսովիչն հիմնել էր։ — (ի կոնտակէն (1)։

1691· Տէր Օգէնտիոս Վօծրէսգուլ Վարդապետն յայս տարի ձեռնա-դրեցաւ եպիսկոպոս ի Լոմ, օգոստ. 5, Վարդան արքեպիսկոպոսէն։

Աստուածատուր եպիսկոպոսն յայս տարի եկաւ ի Հռոմ. մնաց ի հոն 8 տարի. դարձաւ ի Լոմ 1698ին. չի կարցաւ իր մ՚ալ հաստատելու. զէրամ, սուրբ ժողովքն չուզաց փոփոխութիւն անելու վասն արեւելեան Հայերուն,

1. Այսպէս փակագծուած է ի բնագրին։